ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/256

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16437-2021 գրությամբ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.09.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-8130 գրության հիման վրա, 08.10.2021թ. թիվ 26/26-1/16437-2021 գրությամբ նախաձեռնել է «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Մինչև «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու վերաբերյալ նախաձեռնած թիվ ՍՑ-ՆԳ-2021/256 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ դիրքորոշում հայտնելը, ուզում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել մեր կազմակերպության գործունեությանը վերաբերող մի քանի ուշադրության արժանի փաստերի վրա.

«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն Չեխիայի հանրապետությունում գործող խոշոր ներդրումային ընկերության մասնաճյուղն է Հայաստանում և արդեն 20 տարի է ինչ ֆինանսատնտեսական գործունեություն է իրականացնում տարբեր ոլորտներում՝ ապահովելով աշխատեղեր բազմաթիվ ընտանիքների համար: 20 տարվա մեջ ունենալով մոտ 10մլրդ ՀՀ դրամ առևտրաշրջանառություն մեր կազմակերպությունը ՀՀ պետ բյուջե վճարել է շուրջ 600 մլն ՀՀ դրամ գումար՝ տարբեր հարկերի և տուրքերի տեսքով: Մեր ընկերությունը համագործակցում է շուրջ 150 կազմակերպությունների հետ, այդ թվում բոլոր պետական հիմնարկների և ունի բարի համբավ իր պարտականությունները պատշաճ կատարելու հարցում, նշենք նաև, որ շուրջ 10 տարի է մենք համագործակցում ենք ՀՀ աշխատանքի և սոցիլական հարցերի ևախարարության հետ ինքնարժեքից ցածր գներով հաշմանդամների համար տարբեր պարագաներ մատակարարելով:

Հետևյալ հանգամանքների համընկման և հետևյալ ուղղակի և անուղղակի պատճառներով է տեղի ունեցել մեր կողմից թույլ տրված վրիպակը:

Երկար դադարից հետո մեր կազմակերպությունը սույն թվականի սեպտեմբերից սկսեց մասնակցել էլեկտրոնային աճուրդներին (ինչու չէինք մասնակցում?, քանի որ երկար ժամանակ է պետական գմնումները չէին կազմակերպվում էլեկտրոնային աճուրդների տեսքով): Առաջին Էլեկրոնային աճուրդը, որին մենք մասնակցել ենք եղել է հենց Դատական Դեպարտամենտի կողմից կազմակերպված ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20 ծածկագրով աճուրդը: Ինչպես գիտեք Էլեկտրոնային աճուրդներին մասնակցության համար դիմելիս պետք է լրացնել Հավելված 1-ը՝ դիմում - հայտարարությունը, որը էլ աճուրդների e-AUCTION կայքում լրացվում է ինքնաշխատ եղանակով, այսինքն

համակարգը ինքն է լրացնում մեր կազմակերպության տվյալները, մենք միայն լրացնում ենք Իրական շահառուների տվյալները լրացնելու համար նախատեսված հետևյալ աղյուսակը,



որը տվյալ աճուրդի ժամանակ չէր լինում լրացնել (համակարգը թույլ չէր տալիս) և այդ իսկ պատճառով մենք չէինք լրացրել և մեզանից շտկում էին պահանջել, այսինքն դուրս է գալիս e-AUCTION համակարգի ոչ լիարժեք աշխատելու պատճառով մենք հայտնվում ենք փաստի առաջ, քանի որ ունենում ենք մեկ շտկման հնարավորություն, որը արհեստական լարվածություն է ստեղծում և ցանկացած անձ կարող է նման պարագայում վրիպել: Նշենք նաև, որ e-AUCTION համակարգում շտկում ներկայացնելիս՝ երբ շտկված փաստաթուղթը ուղարկում ենք, մեզ ոչ մի ծանուցում կամ հավաստում չի գալիս e-AUCTION համակարգի կողմից, ոչ էլ պատվիրատուներն են կարողանում տեսնել արդյոք շտկումը իրենց հասել է թե ոչ, այսինքն կրկին արհեստական լարվածություն է ստեղծվում քանի որ չենք հասկանում շտկումը ուղարկվել է թե ոչ, մեր կարծիքով պետք է առնվազն e-AUCTION համակարգում օգտվողի համար նախատեսված ձեռնարկ լինի, որպեսզի մասնակիցները նման խոչընդոտների չհանդիպեն: Ի դեպ նշենք, որ շտկումը ներկայացնելու օրը բազմաթիվ անգամ փորձել ենք կապնվել թեժ գծի հեռախոսահամարներով՝ +374(11) 289-321, +374(11) 289-321, որպեսզի ճշտենք թե ինչու չի լինում լրացնել վերոհիշյալ աղյուսակը և ինչպես իմանանք թե արդյող մեր ուղարկած շտկումը տեղ հասել է թե ոչ, սակայն ապարդյուն՝ կամ չէին վերցնում հեռախոսը կամ անջատում էին: Վերջում նշենք, որ Դատական Դեպարտամենտի կողմից կազմակերպված ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20 ծածկագրով աճուրդի հրավերը կազմվել է՝ հաշվի չառնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն

որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության 2 սեպտեմբերի 2021 թվականի N 1421-Ն որոշումը, որը նույնպես ուղղակի թե անուղղակի կերպով ազդել է մեր կողմից ներկայացվելիք շտկման ճշգրիտ լինելու վրա:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք հաշվի առնել նշված փաստերը, և «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ին չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/256 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 09:30-ին և 22.10.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատական դեպարտամենտը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.09.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-8130 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ Ձեզ է ներկայացվում ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Դանինի» ՍՊԸ-ի Հայաստանյան մ/ճ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/256 ընթացակարգի շրջանակներում 14.10.2021թ. ժամը 09:30-ին և 22.10.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/256 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/256 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ 24.09.2021թ. համակարգի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակից է համարվել 2-3-րդ, 5-8-րդ չափաբաժինների մասով «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն:

3. Նույն արձանագրությամբ արձանագրվել է նաև, որ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը լրացված չէ և որոշում է կայացվել նիստը կասեցնել և ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով շտկել արձանագարված անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության՝ Հավելված 1-ի, շտկված տարբերակը կազմված է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես հիշյալ հավելվածում բացակայում է «բանկային հաշվեհամարն է» լրացման ենթակա տողը:

5. Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16437-2021 գրությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 30.09.2021թ. թիվ ԴԴ-3-Ե-8130 գրությունը՝

կից փաստաթղթերով, «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 6 ապրիլի 2017 թվականի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ կետի համաձայն՝ Էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով սույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

Ընթացակարգի հրավերի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի համաձայն՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ սույն հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի...:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում սույն հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում, ներառյալ երբ ՀՀ ռեզիդենտ հանդիսանալու պայմաններում մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտի գնահատման ընթացքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները:

Եթե սույն կետով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը համակարգի միջոցով շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար և մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում...:

Այսպիսով՝ ՀՀ դատական դեպարտամենտի կողմից իր կարիքների համար կենցաղային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.09.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ 24.09.2021թ. համակարգի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակից է համարվել 2-3-րդ, 5-8-րդ չափաբաժինների մասով «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն:

Նույն արձանագրությամբ արձանագրվել է նաև, որ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում (Հավելված 1) 2-րդ կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված աղյուսակը լրացված չէ և որոշում է կայացվել նիստը կասեցնել և ծանուցել Ընկերությանը՝ առաջարկելով շտկել արձանագարված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի կողմից հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության՝ Հավելված 1-ի, շտկված տարբերակը կազմված է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես հիշյալ հավելվածում բացակայում է «բանկային հաշվեհամարն է» լրացման ենթակա տողը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշման համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Եվ այսպես, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը, Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվելով անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սահմանված ժամկետում որպես շտկում ներկայացրել է Հավելված 1-ը՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը, որտեղ կրկին արձանագրվել է անհամապատասխանություն՝

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարության նկատմամբ, այն է՝ Ընկերության կողմից չի լրացվել «բանկային հաշվեհամարն է» տողը:

Այսպիսով՝ վերը նշված անհամապատասխանությունը՝ Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջի նկատմամբ, հանգեցրել է Ընթացակարգին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը: Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետով հստակ սահմանվում է, որ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով՝ գործով առկա նյութերը համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ, գտնում եմ, որ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ն «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Անդրադառնալով Ընկերության կողմից հայտնած հետևյալ դիտարկմանը՝ «*ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/20» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը կազմվել է հաշվի չառնելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության 2 սեպտեմբերի 2021 թվականի N 1421-Ն որոշումը*», հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ոչ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների և ոչ էլ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, իսկ վիճարկվող փաստը բարձրաձայնվել է հայտերը բացվելուց հետո, երբ Ընկերության հայտը մերժվել է, ուստի գտնում եմ, որ տվյալ դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի շրջանակներում Ընկերության վերոնշված դիտարկումը սույն մասով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից չի կարող քննության առարկա հանդիսանալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 08.10.2021թ. թիվ 26/26-1/16437-2021 գրությամբ «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Դանինի» ՍՊԸ Հայաստանյան մ/ճ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**